

Հայտարարվում է մրցույթ Մեծ Բրիտանիայի Կիլե համալսարանում ս.թ. ապրիլի 2-8 «Բարձրագույն կրթության հեռանկարները աշխարհում» խորագրով աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

Աշխատաժողովին կմասնակցեն բուհի թե՛ վարչական և թե՛ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ տարբեր երկրներից: Աշխատաժողովի թեմաներն են.

- Ուսանողական ծառայություններ
- Որակի ապահովում
- Բարձրագույն կրթության մոդեռնիզացիա և միջազգայնացում:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից կարող է մասնակցել մեկ ներկայացուցիչ: Մասնակցությունը ֆինանսավորվում է Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի միջոցներից:

Մրցույթին մասնակցելու իրավասության չափանիշներ.

- Պետք է լինի ՀՊՄՀ-ի աշխատակից (վարչական/ակադեմիական)
- Անգլերեն լեզվի իմացություն Լեզուների համաեվրոպական շրջանակի B2 մակարդակին համապատասխան

Աշխատաժողովի մասնակցության ծախսերը հոգում է Եվրահանձնաժողովի Էրազմուս+ ծրագիրը:

Ցանկացողները, մինչև ս.թ. հունվարի 18-ը Միջազգային համագործակցության բաժին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում (հղում)
- Մոտիվացիոն նամակ, նշելով մասնավորապես՝
 - o Հիմնավորում ծրագրին մասնակցելու համար, թեմայի համապատասխանելիությունը մասնագիտությանը/պաշտոնից բխող գործառույթներին,
 - o Ակնկալիքները վերոնշյալ կոնֆերանսից և արդյունքների տարածման ուղիները
- Ինքնակենսագրություն
- Երաշխավորագիր համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից

Կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՊՄՀ-ի միջազգային համագործակցության բաժին մինչև ս.թ. հունվարի 18-ը: Հավելյալ տեղեկատվության համար, խնդրում ենք դիմել ՀՊՄՀ-ի միջազգային բաժին (վարչական մասնաշենքի III հարկ, 301 սենյակ):

Հունվարի 19-ին տեղի կունենա մրցույթը՝ հարցազրույցի միջոցով: